

եւ ծնաւդաց իմոց՝ Միրզին եւ մաւրն Գաւար Սուլթանին. եւ եղբաւրն իմ Կիրակոսին եւ որդոյն տէր Թումանին. եւ եղաք ի դուռն սուրբ Էջմիածնայ» :

Սաչատուր գրիչ ի Տանձաւեր կ'օրինակէ 1619ին Աւետարան մը «ի հայրապետութեան Էջմիածնի տեառն Մեկքիսեթի կաթողիկոսի եւ յաթոռակալութեան Վաղարշապատու ի տէր Աւետիս կաթողիկոսի»⁹ :

Վերջին անգամ կը յիշուի Աւետիս կաթողիկոս 1622ին : Գրիգոր Դարանաղցի իւր Աստուածաշունչի օրինակութիւնը կ'աւարտէ «ի մեծ թուականիս Հայոց Ռ. եւ Հ. եւ Ա., Նոյեմբեր ամսոյ Է. եւ Քաղոց Թ. Թամուզ Ը. եւ գրեցաւ ի հայրապետութիւն Հայոց տեառն տէր Աւետիսին, որ այժմ յաջորդէ զաթոռ Ս. Գրիգորի Լուսաւորչի մերոյ»¹⁰ :

Հիմնուած այս տողերու վրայ Դարանաղցւոյ վերը յառաջ բերուած տեղիքը՝ «եւ անտի (Էջմիածնայ գնաց) ի Վրաց տունն եւ անդ եղեւ վախճան նորա, որ էր թվին ՌԿԹ» (1620) պէտք է այնպէս հասկնալ թէ Աւետիք 1620ին անցաւ Վրաստան եւ հոն վախճանեցաւ 1623էն ետքը :

Նիւթերու այս համադրութենէն կը տեսնուի, թէ Աւետիս կաթողիկոս բնիկ Էջմիածնեցի էր, որդի Միրզայի եւ Գոհար-Սուրթանի. ունէր երկու եղբայրներ՝ Կիրակոս եւ

⁹ Զեռ. Սաւուրա գիւղի յԱտրպատական (Հաւաքածոյ Յիշատակարանաց Հ. Մ. Պատուրեանի) :

¹⁰ Ժամանակագրութիւն, էջ 612 :